ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2016 թվականի N 18-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջով՝ համայնքի ավագանին որոշում է հաստատել համայնքի ավագանու N 5 հերթական նիստի օրակարգը.

1.«Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին:

2.Ալափարսի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 42-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ(4) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳՈՒՐԳԵՆ ՆԱՋԱՐՅԱՆ

ՄԱՐՏԻՆ ԱՂՈՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

ՎԱԼՏԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257532, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2016 թվականի N 19-Ա

«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1851-Ն որոշման՝ համայնքի ավագանին որոշում է համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ գույքերը սեփականության իրավունքով անհատույց հանձնել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը.

1.Ջրավազան և հողամաս.

1)Գույքի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Ալափարսի համայնք.
2)Գույքի ծածկագիրը՝ 07-008-067-006, N 2750559 տրված 2010 թվականի նոյեմբերի 11-ին.
3)Գույքի մակերեսը՝ 591 քառակուսի մետր.
4)Գույքի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր.
5)Հողամասի գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր:

2.Ջրամատակարարման ներքին ցանց.

1)Գույքի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Ալափարսի համայնք.
2)Գույքի ծածկագիրը՝ 07-008, N 2750558, տրված 2010 թվականի նոյեմբերի 11-ին.
3)Գույքի մակերեսը՝ 6524.6 քառակուսի մետր.

4)Գույքի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր.

5)Հողամասի գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների հողեր:

Կողմ(4) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳՈՒՐԳԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐՏԻՆ ԱՂՈՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

ՎԱԼՏԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարսի համայնք, 19-րդ փողոց, թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2016 թվականի N 20-Ն

ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է Ալափարսի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Ալափարսի համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 42-Ն որոշման(այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «56784.5» թիվը փոխարինել «58377.8» թվով.

2.որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «65248.5» թիվը փոխարինել «66841.8» թվով.

3.որոշման 1-ին կետի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ(4) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԳՈՒՐԳԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ
ՄԱՐՏԻՆ ԱՂՈՅԱՆ
ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ
ՎԱԼՏԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ